

ցոյց կուտան զայն Ս. քաղաքին հարաւ – արեւմտեան բլուրին վրայ:

Սուրբ գրական գրուածքները շատ որոշ չբլլալուն Սիրոնի տեղւոյն համար, շատ կարծիքներ յառաջ եկած են, բայց վերջապէս աւանդական տեղւոյն վրայ կանգ կ'առնեն եւ «Դաւթի քաղաքը» կը դնեն արդի Սիրոն լեւրան վրայ: Հնախօսական գիւտերն ալ լիապէս կը հաստատեն Հրեաներու և Քրիստոնեաներու աւանդութիւնը (Bar. gd. էջ 110): Սիրոն լեւրան քրիստոնէական աւանդութիւններն ասոնք են.

1. Ս. Յակոբեանց Հայոց վանքը եւ եկեղեցին. -- Դաւթի բերդին մօտ, ճանապարհին վրայ շինուած է Հայոց Ս. Յակոբեանց վանքը և եկեղեցին, «ի վերայ գազաթան լերինն Սիրոնի», հայկական թաղին մէջ որ կոչուած է Հարեք եղ Արմեն: Նոյն վանքին ու եկեղեցիին պատմութիւնը եւ նկարագրութիւնը տեսնել^(*) Հ. Վ. Ե. (էջ 248-78), իսկ աւանդութիւններն ասոնք են. Յակոբ Տեառնեղբոր մարմինը ամփոփուած է Ս. եկեղեցւոյս Աւագ խորանին տակ՝ ըստ աւանդութեան, մանաւանդ Յայսմաւուրքն ալ կ'ըսէ թէ «ամփոփեցաւ ի կողմն Սիրոնի» և հոս էր Տեառնեղբոր և իր ազգանաց սուներ: Ուրեմն պատշաճ էր որ հրեաներու սուվորութեան համաձայն՝ հոն թաղուէր. հոս էր նաեւ սուրբին Աթոռը (Հան. 84-85):

Եկեղեցիին հիւսիսային կողմը կը գտնուի հոյակապ և գեղեցիկ մատուռ մը՝ ուր ամփոփուած է Զեքեթեան Ս. Յակոբի Գլուխը, և որ կը կոչուի Գլխա-

(*) Իսկ աւանդական շինութեան մասին տեսնել Յաւելուածը՝ որ գրուած է Գրիկն վերջը: